

ՀԱՅ ԿԼԱՍԻՑԻՍՏԱԿԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԵՐԸ

Ա. ԶՐԲԱՇՅԱՆ

Հայ կլասիցիստական գրականությունը, սկզբնավորվելով XVIII դարում, անցել է ավելի քան հարյուրամյա ճանապարհ: Սակայն նրա առավել գործուն շրջանը XVIII դ. վերջից մինչև XIX դ. 50—60-ական թվականներն էին, երբ ստեղծվեցին այդ ուղղության առավել նշանակալից երկերը: Եվրոպականի և ռուսականի համեմատությամբ հայկական կլասիցիզմը ուշացած էր. նրա ծաղկումը համընկավ այն ժամանակաշրջանի հետ, երբ Եվրոպայում գերական այդ ուղղությունը լիովին դուրս էր մղվել ռոմանտիզմի և ռեալիզմի կողմից: Եվ եթե արևմտաեվրոպական կամ ռուսական կլասիցիզմի երևան գալը պայմանավորված էր ազգային պետականության կազմավորմամբ ու ամրապնդմամբ, ապա հայկական կլասիցիզմը չուներ քաղաքական նման իրական նախադրյալներ. այն խառնվում էր ազգային միավորման և անկախության գաղափարական հեռանկարի վրա, որն այդ գրականությանը հաղորդում էր ղգալի վերացականություն, թուլացնում նրա կապերը հասարակական կյանքի կենսական խնդիրների հետ:

Սակայն հայկական կլասիցիզմը, ձևավորվելով իբրև ուրույն գեղարվեստական ուղղություն, ստեղծեց սյնալիսի ավանդներ, առանց որոնց դժվար կլիներ պատկերացնել հայ գրականության հետագա ընթացքը: Թեև գեղարվեստական կատարելության իմաստով հայկական կլասիցիզմը մեծ նվաճումների չհասավ, մանավանդ՝ չկարողացավ հոգեկան կամուրջ ստեղծել ժամանակակից ընթերցողի հետ, սակայն իր գոյություն մի քանի տասնամյակների ընթացքում ձգտեց յուրացնել այն բոլոր ժանրային ձևերը, որոնք մշակվել էին եվրոպական կլասիցիստների կողմից XVII—XVIII դդ. ընթացքում: Այդ հիման վրա առաջացավ մի նոր ժանրային համակարգ, որը ծանոթ չէր հայ գրականությանը նախորդ դարերի ընթացքում: Դրանով ստեղծվեց որոշակի գրական կուլտուրա, անտիկ և նոր ժամանակների շատ ժանրեր մշտան ազգային մշակույթի զինանոցը: Հայ կլասիցիստների մեծագույն ծառայություններից մեկը պետք է համարել մի շարք տեսական հարցերի մշակումը, ինչպես նաև ժանրերի բավական կուռ ու ամբողջական տեսության ստեղծումը, որը որոշակի ազդեցություն է ունեցել գրական պրոցեսի վրա:

Հայկական կլասիցիզմի ժանրային համակարգն իր շատ կողմերով ընդհանուր գծեր ուներ եվրոպական կլասիցիզմի հետ: Սակայն այն ուներ նաև իր առանձնահատկությունները, որոնք բխում էին հասարակական ու գրական որոշակի նախադրյալներից: Այսպես, եթե եվրոպական կլասիցիզմն ավելի համակողմանիորեն դրսևորվեց դրամատուրգիայի բնագավառում, ապա հայ կլասիցիստների տարերքը պոեզիան էր, նրա մեծ և փոքր ձևերը (դյուցապեններգություն, վարդապետական քերթություն, ներբող, հովվերգություն և այլն), որտեղ առավել ցայտուն էին երևում գրական այդ ուղղության առանձնահատկությունները: Եվ հենց շափածոյի բնազավառում էր, որ հայկական

կլասիցիզմը կարողացավ ստեղծել որոշ մնայուն արժեքներ, ազդել հետագա շրջանի գրական պրոցեսի վրա: Չանդրադառնալով պոեմի ժանրին, որն իր տարատեսակներով բավական լայն դրսևորում գտավ հայկական կլասիցիզմի գրականության մեջ, մենք ստորև կփորձենք քիչ թե շատ ամբողջականորեն ներկայացնել հայ կլասիցիստական քնարերգության ժանրերը, բացահայտել պոեզիայի փոքր ձևերի դրսևորման առանձնահատկությունները գրական այդ ուղղության մեջ:

1852—54 թթ. Վենետիկում հրատարակվում է «Տաղք Մխիթարեան վարդապետաց» եռահատոր ժողովածուն, որտեղ ամփոփված էին մխիթարյան հինգ բանաստեղծների (Արսեն Բագրատունի, Գաբրիել Ավետիքյան, Մանուել Զախչախյան, Նղիա Թովմաճան, Էդուարդ Հյուրմյուզյան) գործերը՝ գրված նախորդ տասնամյակների ընթացքում: Այս հատորներում ղետեղված բանաստեղծությունները ներծծված են կրոնական բարոյախոսություններ, այստեղ իշխում են ռացիոնալիստական ոճն ու սառը դատողականությունը, բարոյախրատական ոգին ու վերացական հայրենասիրությունը: Մխիթարյան բանաստեղծները ձգտում են հանդիսավորություն հաղորդել իրենց գործերին՝ օգտագործելով գրաբարյան խրթին բառեր ու արտահայտություններ: Սակայն մխիթարյան բանաստեղծների այս հատորներում տեղ են գտել և այնպիսի գործեր, որոնք աչքի են ընկնում իրենց քնարականությամբ, մարդկային հույզի և բնության հաջողված պատկերներով:

Կլասիցիստներն, առհասարակ, պոեզիայում գերապատվությունը տալիս էին ներբողի ժանրին, որն իր հանդիսավոր բնույթով և փառաբանական բովանդակությամբ առավել շահով էր համապատասխանում գրական այդ ուղղության պահանջներին ու ճաշակին: Կլասիցիզմի պոետիկայում անձնական քնարերգությունը երկրորդական տեղում էր դասվում, և պոեզիայի հիմնական խնդիրը համարվում էր երևելի ու մեծանուն մարդկանց դրվատումը: «Հանդիսավոր ներբողը անտիկ ժամանակներից գովերգում էր պետության արտաքին կամ ներքին կյանքի կարևորագույն իրադարձությունները: Հենց այդ պատճառով էլ բարձր ներբողի ժանրը ավելի էր համապատասխանում ազգային միավորման ժամանակաշրջանի պահանջներին, քան, ասենք, սիրային կամ խնջուքի երգերը...»¹: Հայ կլասիցիստ տեսաբանները ևս շատ մեծ տեղ են հատկացրել հանդիսավոր պոեզիային և հատկապես ներբողին: Այսպես, Մ. Բժշկյանը տաղերգությունը բնորոշում է իբրև «երգ 'ի պատիւ դիցազանց»²: Մ. Սեբաստացին, որն այդ ժանրով ստեղծագործող առաջին հայ հեղինակն էր, իր «Բառգիրք հայկազեան լեզուի» աշխատության մեջ ներբողը սահմանում է որպես «ներբողական ճառ կամ բանաստեղծական գովեստ՝ արբեալ 'ի պատիւ սրբոց, կամ քաջ արանց...»³: Ներբողի ժանրի այս հանդիսավոր բնույթի վրա է շեշտը դնում նաև Ստ. Ազոնցը՝ 1775 թ. Վենետիկում լույս տեսած իր «Ճարտասանություն» աշխատության մեջ:

Պատահական չէ, այսպիսով, որ հայ կլասիցիստների բանաստեղծական ժողովածուի մի պատկանելի մասը զբաղեցնում են հենց ներբողները: Սակայն, եթե եվրոպական և ռուս կլասիցիստների հանդիսավոր ներբողներում առավելապես գերակշռում էր քաղաքական մտախիլը, պետական միասնական շահերի գովերգումը, ապա հայ կլասիցիստական ներբողը հիմնականում ունեւր կրոնական և հայրենասիրական թեմատիկա: Սա, անշուշտ, պետք է բացատրել միասնական պետության բացակայությամբ և այն հանգաման-

¹ Москвичева Г. В. Русский классицизм. М., 1978, с. 20.

² Մինաս Բժշկյան, Ճեմարան գիտելեաց, Վենետիկ, 1815, էջ 36:

³ Մխիթար Սեբաստացի, Բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1749, էջ 753:

քով, որ հայկական կլասիցիզմը գերազանցապես դարգանում էր վանական միջավայրում:

Մխիթարյան բանաստեղծների հատորներում մենք հանդիպում ենք տարբեր բովանդակության և բնույթի ներբողների: Այսպես, Արսեն Բագրատունու «Տերունականք» խորագիրը կրող շարքում հիմնականում կրոնական ներբողներ են, որոնք փառաբանում են աստծուն («Ի ծնունդ Տեառն», «Ի յայտնութիւն Տեառն»), Մանուէլ Զախըխյանը ներբողներ է ձեռնել Հիսուսին և դանազան սրբերի («Ի ծնունդ փրկչին», «Ի նահատակութիւն սրբոյն Ստեփանոսի նախավկայի» և այլն): Բավական շատ են այն ներբողական բանաստեղծությունները, որոնք գրված են կրոնական տոների և քահանայաօծության հանդեսների առթիվ: Այս կարգի գործերում հանդիսավոր ոճը միաձուլվում է խրատական բովանդակության հետ, քանի որ բանաստեղծությունների նպատակը ոչ միայն սոսկ այս կամ այն հանդիսության փառաբանումն է, այլ նաև նորրեծա կրոնավորներին ու քահանաներին ձիշտ ուղի մատնանշելը: Մ. Զախըխյանը «Ի հանդէս ընդունելութեան վարդապետական գաւազանի երկուց նորրեծայ վարդապետաց» բանաստեղծության մեջ գրում է.

Նոր անդաստան լայնածաւալ
Ձեզ առաջի կայ արօտիւ
Փռչք 'ի քանցիլ ձեռամբացի
Սերմն արգաւանդ բսփիւռ ցանելւ,
.
.
.
Երթայք զըւարթ ձեզ ուղեկից
Նախանձ փառաց աստուածայնոյն.
Ամոքեսցէ ձեզ զամենայն,
Սէր Յիսուսի գորովագոյն⁴:

Բագրատունին, Զախըխյանը և Թովմաճանը գրել են նաև ներբողներ՝ նվիրված միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացուն, փառաբանել նրա խելքի զորությունն ու կատարած մեծ գործը: Մխիթարյան բանաստեղծները ներբողել են նաև իրենց ժամանակի նշանավոր անձանց կամ որևէ նշանակալի իրադարձություն: Այսպես, էդ. Հյուրմյուզյանը փառաբանական բանաստեղծություն է գրել «Մեծ Հայկազյան բառարանի» տպագրության կապակցությամբ («Յաւարտ տպագրութեան Մեծի Հայկազեան բառարանի»): Կան նաև այսպես կոչված «հարսանեկան ներբողներ»՝ գրված որևէ նշանավոր անձի հարսանյաց տոնի առիթով: Այս կարգի գործերում հիմնականում իշխում են վերացական ոճն ու փառաբանական բովանդակությունը, թեև կան նաև որոշ գեղեցիկ քնարական հատվածներ: Այսպես, Ա. Բագրատունու՝ Միհրան Տյուզի և Մարիոնքա Եաղլըքճյանի հարսանիքի առիթով գրված բանաստեղծությունն ամբողջովին նվիրված է օրիորդի գեղեցկության և երիտասարդ զույգի սիրո պատկերմանը.

Ի Շուրանին բութաստան
Ընդ վարդենուցն հովանի
Փափուկ բար զվարդ և շուշան
Նընչէր Մարեոն գեղանի.

Հերքն ոսկեթև՝ ծածանէր
Ի ձիւնափայլ՝ ծոց ծղկաց,
Գոհար այտից շող՝ կաթիւր,
Քըրտունքըն շաղ լուսարփեաց: (1, 175)

⁴ Տաղը Մխիթարեան վարդապետաց, հ. 2, Վենետիկ, 1853, էջ 126: Հետագա մեջբերումների դեպքում փակագծում կնշենք միայն հատորը և էջը:

Ներբողների շարքում մեծ թիվ են կազմում պատմական նշանավոր անձանց և իրադարձություններին նվիրված բանաստեղծությունները: Սրանք հիմնականում ունեն հայրենասիրական բնույթ, գրված են կլասիցիզմին բնորոշ ուսցիոնալիստական շորությամբ, վերամբարձ արտահայտություններով և խրթին գրաբարով: Մխիթարյան բանաստեղծները ներբողներ են ձևել Տըր-դատ թագավորին (Բագրատունի), Վարդան և Վահան Մամիկոնյաններին (Ավետիքյան, Ջախջախյան), Մովսես Խորենացուն, ինչպես նաև՝ հայ ժողովրդի համար նշանակալի մի շարք իրադարձությունների: Խորենացու «Պատմության» տպագրության առթիվ գրված ներբողում բանաստեղծն այսպես է քնահատում քերթողահոր անփոխարինելի դերը մեր պատմագրության մեջ.

Թէ չէր Մովսէս, ով Այրարատ,
Ո՞ր զմէզ գլխոյդ առնէր փարատ.
Կամ ո՞ր ընդ քեզ պշնոյր, Մասիս,
Ի բազմակոյտ լերանց դասիս.
Ըզբէլայազթն ո՞ր երգէր Հայկ,
Որ աշխարհիս ծագեաց մեզ այգ.
Ո՞ր և հրգօր Տիգրան ու Արամ
Պըսակէին յոստ անթառամ (II, 152):

Ինչպես հայտնի է, XVIII դ. վերջերից Մխիթարյան միաբանության դըպրոցական թատրոնում աշակերտների և ուսուցիչների ուժերով ներկայացվում էին ինչպես ինքնուրույն, այնպես էլ թարգմանական ողբերգություններ ու դրամաներ: Ներկայացումներից հետո ավանդույթ էին դարձել հրապարակային քննարկումները, որոնց ժամանակ ելույթ էին ունենում աշակերտներ, միաբանության վանականներ, բանաստեղծներ: Նրանք հանպատրաստից կամ նախօրոք գրված բանաստեղծություններ էին արտասանում՝ ներբողելով ներկայացման կազմակերպիչներին ու դերասաններին: «Տաղը Մխիթարյան վարդապետաց» ժողովածուում գետեղված են զանազան թատերական ներկայացումների առթիվ գրված տասնյակից ավելի բանաստեղծություններ: Սրանք նվիրված են Արսեն Բագրատունու «Երուանդ Բ», Եփրեմ Սեթյանի «Մեծն Ներսես Պարթև», Ե. Թովմաճանի «Որատեանց և Կուրատեանց մենամարտութիւն», Կոռնելի «Պողիկատոս» և այլ ողբերգությունների: Սրանք բոլորն էլ ներբողական բանաստեղծություններ են, որտեղ հեղինակներն արտահայտում են թատերական ներկայացումից ստացած իրենց տպավորությունները, վերլուծում դերասանական խաղը, փառաբանում մեր ազգային հերոսներին և հանդես գալիս ոգևորունչ հայրենասիրական կոչերով:

Կլասիցիստական պոեզիայի մյուս տեսակը՝ ուղերձը, նույնպես իր լայն դրսևորումն է գտել մխիթարյան բանաստեղծների մոտ: Ուղերձները գրվում էին ավելի մտերմիկ ոճով, երբեմն երևան էին գալիս անձնական մոտիվներ, փիլիսոփայական խորհրդածություններ, թեև այս ժանրում էլ հիմնականում իշխում էին վերացականությունն ու կրոնաբարոյական խրատը: Մխիթարյան բանաստեղծները ուղերձներ են հղել իրենց ժամանակակից անձանց՝ որևէ մտերիմ ընկերոջ կամ նշանավոր անհատի, նորընծա քահանաների կամ միաբանության բարձրատիճան կրոնավորների: Նրանք ուղերձներ են գրել նաև իրենց գրչակիցներին, որտեղ քննարկել են գրական և անձնական բնույթի մի շարք հարցեր: Այսպես, դիմելով Առան Սիսակյանին (Ա. Բագրատունուն), Ջախջախյանը գրում է.

Ոչ շուք անձանց այլ դիւրութիւն միայն խնդրեմք մեր կենաց,

Ոչ թէ պըսակ զոր բաղոն ազահ հէգ քերթողին ոչ հիւսեաց.

Բանտուալն հոմոս թէ մրմնջէ ա՛կն ունիցի ինչ բարեաց.

Իմ, Սիսակեան, լուր նըսգիս, թէ չախորժես կաց ՚ի բաց (II, 89):

Ինչպես հայտնի է, կլասիցիզմի ժանրային համակարգում իր որոշակի տեղն ունեւր նաև հովվերգութեան ժանրը: Հայ բանաստեղծներից էր. Հյուրմյուզյանը, որն ավելի հաճախ է անդրադարձել այդ ժանրին, ամփոփել է իր հովվերգութեանը արտանձին բանաստեղծական շարքում («Հովուական գեղօնք»): Իր «Առձեռն բանաստեղծութեան» տեսական աշխատութեան մէջ Հյուրմյուզյանը բնութագրում է հովվերգութեան (կամ, ինչպես ինքն է անվանում, հովվաբանութեան) ժանրային հիմնական հատկանիշները: Նա գտնում է, որ բանաստեղծն այդտեղ պետք է կարողանա տալ հովվական կյանքի և դաշտային գեղեցկութեան պատկերավոր նկարագրութեաններ, գլուղական և քաղաքային կյանքի համեմատութեաններ: Այս ամենը պետք է կատարել այնպես, որ բանաստեղծութեանը նմանվի մի գեղեցիկ նկարի: Այդ ժանրի լավագոյն նմուշները Հյուրմյուզյանը տեսնում է անտիկ գրականութեան մէջ (Թեոկրիտես, Վիրգիլիոս):

«Հովուական գեղօնք» շարքում ղետեղված են հինգ բանաստեղծութեան, որոնք գրված են հերոսների երկխոսութեան ձևով: Այստեղ կան բնութեան գեղեցիկ նկարագրութեաններ, գլուղական կյանքի և աշխատանքի պատկերներ.

Մըշակք 'ի կուլս 'ի հրնձանին,
Պըսակաւորք յուոց ըղկայթ
Կարմիր ոտիքն հարկանէին:

Հնչէր երգոց հովիտն 'ի ձայն,
Եւ արձագանգք շուրջ 'ի լերանց
Փոխանակաւ կըրկնէին զայն (III, 15):

Հյուրմյուզյան-բանաստեղծի հովվերգական նախասիրութեանները շատ ուժեղ են: Մխիթարյան բանաստեղծներից ամենաշատ նրա մոտ ենք հանդիպում բնութեան նկարագրութեանների: Տարվա շորս եղանակներին նվիրված իր բանաստեղծութեաններում («Երգ ի Գարուն», «Երգ յԱմառն», «Երգ յԱշուն», «Երգ ի Ձմեռն», «Դարձեալ ի Գարուն» և այլն) Հյուրմյուզյանը պատկերում է բնութեան գեղեցկութեանները, արտահայտում իր հուզական վերաբերմունքը դրանց նկատմամբ: Շատ գեղեցիկ է պատկերված, օրինակ, ամռան մրգառատ այգին.

Սաղարթագեղ մայրեաց ծայրք
Տատանին մեղմ 'ի ղեփիւտ,
Եւ ծածանին դաշտավայրք
Ի շէկ ցորեան համասփիւտ:

Մառաստանին մրրգաւէտ
Մանունք 'ի շոր ու 'ի ծիրան
Կողերքն յերկիր հակամէտ
Մերձ առ ինև կորոնան (III, 141—142):

Սակայն և՛ հովվերգութեաններում, և՛ բնութեանը նվիրված բանաստեղծութեաններում Հյուրմյուզյանը մշտապես ներմուծում է կրոնաբարոյախոսական մոտիվներ, բնութեան պատկերները ծառայում են աստծո փառաբանմանն ու հանդերձյալ կյանքի գովերգմանը: Այսպես, նրա հովվական գեղոններից մեկը («Հովիւ և հովուուհի») ներկայացնում է գլուղական կյանքի մի գեղեցիկ պատկեր, սակայն հեղինակը տողատակում նշում է, որ այս բանաստեղծութեանն իրենից ներկայացնում է կրոնական աշխարհայեացքով նրկարված Քրիստոսին և սուրբ եկեղեցուն: Այս հանգամանքը, անշուշտ, արդյունք էր հայկական կլասիցիզմի ընդհանուր կրոնաբարոյախոսական ուղղվածութեան և մխիթարյան բանաստեղծի գաղափարական ու աշխարհայեացքային որոշ սահմանափակութեան:

Հովվերգական տրամադրություններ արտահայտող բանաստեղծությունների հանդիպում ենք նաև Մ. Զախչախյանի մոտ («Արտաւար առ մեղու», «Քեղջիկական եւ քաղաքական կեանք» և այլն):

Ուսուցողական, խրատական տարրը, որ այնքան բնորոշ է հայկական կլասիցիզմի ողջ գրականությանը, չափածոյում դարձավ մի շարք բանաստեղծությունների գերակշռող մոտիվը: Պախարակելով մարդկային արատներն ու դրվատելով առաքինությունները, կլասիցիստ բանաստեղծները ցանկանում էին (որքանով թույլ էր տալիս նրանց աշխարհայացքը) մատնանշել կյանքում ապրելու ճիշտ ուղիներ: Մ. Զախչախյանն իր բարոյախրատական բնույթի «Կտակ մեղուաց» բանաստեղծության մեջ խորհուրդ է տալիս հետեւել մեղունների օրինակին, որոնք, միավորվելով, կարողանում են օգտակար գործ կատարել («Ոչ Մեղու—միայնակ Զիւր լնու—ըզփեթակ»): Էդ. Հյուրմուղյանը շատ ունի այնպիսի բանաստեղծություններ, որտեղ միահյուսվում են բնութան գեղեցիկ նկարագրություններն ու բարոյական դասերը, կրոնասիրության քարոզն ու աշխարհի ունայնության գաղափարը: Եվ քանի որ կյանքում ամեն ինչ անցողիկ է, ապա բանաստեղծը խորհուրդ է տալիս ամեն ոտպե պատրաստ լինել մահվան և երբեք չթշնամանալ ուրիշների հետ.

Եւ ոչ զօրքն վաղ
Ի քոյում ձեռին
Թող շարայաչաղ
Ոստիւրն քոյին:

Հապա՛ խրատ քեզ տամ,
Յապայն անվրստահ՝
Գու յամենայն ժամ
Պատրաստ առ 'ի մահ (III, 132):

Բանաստեղծն արհամարհանքով է խոսում երկրային փառքի ու գանձի մասին, որոնք նա համարում է «կորստական» և անցողիկ: Նա մարդկանց խորհուրդ է տալիս կրթել իրենց զավակներին, դարձնել նրանց կրոնասեր և առաքինի («Թէ զորդիս քո կըրթես դու ոչ, Զես հաչք, շես մայր որդեգորով»):

Մխիթարյան բանաստեղծներն ստեղծագործել են նաև եղբերգություն ժանրով, որն ունի իր ուրույն տեղը կլասիցիստական քնարերգության ժանրային համակարգում: Գրվելով որևէ վշտալի իրադարձության կապակցությամբ, այն միշտ արտահայտում է ողբի և տխրության տրամադրություններ: Սակայն այս տիպի բանաստեղծություններում եղբրական տրամադրությունը արգելք չի հանդիսացել կլասիցիստական ոճի վերամբարձության և դատողականության համար: Այս ժանրի հաջողված նմուշներից է Ն. Թովմաճանի «Ողբ եկեղեցւոյն Հայաստանեայց» բանաստեղծությունը, որտեղ հեղինակը ողբում է Հայաստանի նախկին փառքն ու շենությունը.

Դարձցի մանկտին իմ քաղցր անոյշ,
Զի շնն 'ի բերդն յղեալ Անյուշ.
Նա աշխարհիս տամ երանի,
Որպէս երբեմն էր մեծն Անի:
Ա՛հ, ծնգասէր գեղոյ հարսին,
Պերճ ծամակալքն առան վարսին.
Յառագաստին շէր անդ փեսայ,
Եւ արհաւիրք 'ի նմա տեսայ (II, 185):

Տապանագրի (էպիտաֆիալի) ժանրը ևս իր որոշակի դրսևորումն է գտել հայ կլասիցիստական պոեզիայում (Բագրատունի, Հյուրմուղյան): Այն սովորաբար մեկ-երկու քառատողից բաղկացած փոքր բանաստեղծություն է, բայց կան նաև ավելի ընդարձակները: Նախատեսված լինելով գերեզմանին

գրվելու համար, տապանագրերը պարունակում են հանգուցյալին տրված սեղմ և դիպուկ բնութագրումներ, նրա կյանքի և գործունեության գնահատականներ: Այսպես, Միքայել Չամչյանի մահվան առթիվ գրված տապանագրում Հյուրմյուզյանը հատկապես ընդգծում է նրա ազգագուտ գործունեությունը.

Ռաբուն Միքայել 'ի տանէն Չամչեան
Վանացն 'ի Վեհէժ ուխտին միաբան:
Յութսուն և շորից ամացն ալետջթ
Երկասիրելով համազգեացն 'ի փոյթ,
Ի Բիզանդիոյ մինչև 'ի Բասրա
Շրջեալ հովուութեամբ, աստ հանգչի ապա:
Յանձուկ 'ի շիրմիս պարփակեալ 'ի փոս,
Ազգասէր երկովքն աշխարհաքարոզ (III, 157):

Մխիթարյան բանաստեղծության ժանրային պատկերն ամբողջացնելու համար չպետք է մոռանալ նաև երգիծաբանության ժանրը, որին կլասիցիզմի տեսաբանները հատկացնում էին բավական կարևոր դեր՝ մարդկային բարքերի վրա ներգործելու առումով: Երգիծական բանաստեղծությունները հիմնականում գրված են կենցաղային թեմայով. այդպիսին է Բագրատունու «Մթափականք» շարքը («Ի հերիսայն», «Անէծք ի ճանճս» և այլն), Հյուրմյուզյանի «Ի խստորն» բռնահանգ բանաստեղծությունը և այլն: Մ. Զախջախյանը երգիծական ուժեղ շեշտերով պախարակում է իր ժամանակի մարդկանց անուսումնասեր բարքը («Յանուսումնասէր բարս մերազնեայց արդեայց»):

Թէ կեանք նոցա անցցեն այսպես՝ կարծեն միշտ տօն,
Գրեալը գանձինս յամենայնի գոհք օն և օն.
Որպէս անգէտ փակեալ շերամք յանձուկ 'ի բոյն
Անդ իւր օրոցք, անց և դամբանք միշտ կենդանւոյն (II, 43):

Թեպետ հայ կլասիցիստների տարերքը առավելապես հանդիսավոր ոճն ու փառաբանական բովանդակությունն էր, սակայն նրանք հաճախ փորձել են տալ նաև մարդկային կյանքի բանաստեղծական իմաստավորումը, անդրադարձել են աշխարհի ունայնության, կյանքի և մահվան խնդիրներին: Խոհական-փիլիսոփայական բնույթի այդպիսի բանաստեղծություններ շատ կան հատկապես Զախջախյանի և Հյուրմյուզյանի մոտ: Այս կարգի գործերում մշտապես առկա է նաև բարոյախրատական տարրը: Աշխարհում գոյություն ունեցող ամեն ինչի ունայնության, անցողիկության մտփիվները միահյուսվում են հանդերձյալ կյանքի հավերժության կրոնական գաղափարի հետ: Այդ է պատճառը, որ բանաստեղծը հորդորում է շերկնչել մահվանից, ավսպասել նրան հուսով.

Մահ զոր 'ի յանձն էառ Յիսուս,
Քեզ յարութեան աւտտէ յոյս.
Չեն արդարեւ շեն ինչ կեղծիք,
Վերածնանի անդրէն փիւնիկ.
Մեոիր ապա մեոիր վըստահ,
Դու յարիցես 'ի կեանս անմահ (III, 130):

Թեպետ կլասիցիզմի պոետիկական հակված էր ամեն ինչ ենթարկել բանականության և դատողականության օրենքներին, այնուամենայնիվ, չպետք է անտեսել այն հանգամանքը, որ մխիթարյան կլասիցիստները հաճախ հաղթահարում էին ուսցիոնալիզմի կապանքները՝ արտահայտելով իրենց քնարական ապրումներն ու հույզերը: Նրանք շատ բանաստեղծություններ ունեն նվիրված բնությանը, տարվա եղանակներին, քնարական հատվածեր՝ ձոնված սիրելի ընկերոջը, բարեկամին և այլն: Գրականության պատմության

մեջ հաճախ է անտեսվել նրանց ստեղծագործութեան այս կողմը, բնութեանը նվիրված բանաստեղծությունները համարվել են «անկենդան» ու «անարվեստ», մխիթարյան պոեզիան դիտվել է իբրև կյանքից ու իրականությունից կտրված մի բան⁵: Շատ ավելի խիստ բնութագրումներ է տվել Մանուկ Աբեղյանը՝ դնահատելով այդ ժամանակաշրջանի վեհատիկյան ստեղծագործողներին: Նա ընդհանրապես մերժում է նրանց բանաստեղծական շնորհը՝ համարելով նրանց այնպիսի մարդիկ, որոնք, «փակված իրենց վանական պատերի մեջ՝ իրենցից, իրենց գրական աշխատանքից, իրենց բառախաղերից դուրս աշխարհ գրեթե չեն տեսնում»⁶: Զի կարելի, իհարկե, համաձայնել այս խիստ գնահատականների հետ և բոլորովին անտեսել հայ կլասիցիստների ավանդը մեր բանաստեղծության զարգացման մեջ: Ծիշտ է, նրանց պոեզիայի զգալի մասը կազմում են վերացական, վերամբարձ ներբողները, կրոնական ու բարոյախրատական մոտիվները, չկան սոցիալ-քաղաքական իրադարձությունների անմիջական, կրքոտ արձագանքներ: Այնուամենայնիվ, որքանով թույլ էին տալիս կլասիցիզմի պոետիկան ու վանական միջավայրը, նրանք ցուցաբերել են խոր հայրենասիրություն, անդրադարձել իրենց հուզող հարցերին՝ հաճախ դրսևորելով իսկական քնարերգու-բանաստեղծի ձիրք և օժտվածություն: Այդպիսին են Բագրատունու «Ի սրինգն», «Դաշտիկն յաւար, եղերք մշակի», «Ի մահ սոխակին, եղերք հովուի» բանաստեղծությունները, Հյուրմյուզյանի հովվերգություններն ու բնութեանը նվիրված ոտանավորները, Զախչախյանի «Առ Սոխակին», «Գարունը» և այլն: Կենդանի և վառ գույներով են պատկերված գարնան գեղեցկությունները, ծիծեռնակների զալուստն ու ծաղիկների բուրմունքը (Մ. Զախչախյան, «Գարուն»):

Հրնչին անձաբ անտաբ լերինք
 Եւ արձագանգք քաղցր 'ի սրինգ:

Զարդարին թուփք ծառք 'ի սաղարթ,
 Եւ ազգք հաւուց ճրճուեն գրւարթ:

Ոչ այլ 'ի գոմ սիրէ ըզնինջ
 Եւ անդէորդ առ իւրն երինջ (II, 93—94):

Մենք տեսնում ենք նաև խոր ցավ բնութեան գեղեցկությունների կորստյան համար: Ահա թե ինչպես է սգում քնարական հերոսը սոխակի մահը (Բագրատունի, «Ի մահ սոխակին, եղերք հովուի»):

Մի գիս մի գիս ըսփոփէք
 Մի գիւր սըրտիդ տայք իրբէք:
 Զի սէր սոխակն իմ լրուեաց
 Սան իմ սիրուն երգասաց,
 Զի սէր հաւիկն իմ մեռաւ
 Սան իմ սիրուն անպարսաւ (I, 222):

Քնարական նման գեղեցիկ հատվածներ կարելի է գտնել մխիթարյան բանաստեղծներից գրեթե յուրաքանչյուրի մոտ: Սակայն կրոնական դոգմատիզմի կապանքները, կլասիցիստական ուղղության սահմանափակումներն ու խրթին գրաբար լեզուն թույլ չտվեցին նրանց ստեղծել իսկական աշխարհիկ պոեզիա, որտեղ կարող էր անկաշկանդ դրսևորվել մարդկային հոգու և զգացմունքի ողջ հարստությունը: Ծիշտ է, մխիթարյանների պոեզիան չհասավ գեղարվեստական բարձր մակարդակի, բայց այն արժեքավոր է մի շարք կողմերով, այդ թվում նաև իր ժանրային մշակվածությունամբ, որը զգալի դեր խաղաց հետագա շրջանի դեղարվեստական զարգացման մեջ:

⁵ Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, Ե., 1962, էջ 73:

⁶ Մ. Աբեղյան, Երկեր, հատոր Գ, Ե., 1970, էջ 560:

Վերոհիշյալ բանաստեղծների համեմատութեամբ նշանակալից առաջընթաց կատարեց Ղևոնդ Ալիշանը, որն իր գեղարվեստական ժառանգութեան հիմնական մասով պատկանում է կլասիցիզմի ուղղութեանը: Ապրելով և ըստեղծագործելով մխիթարչյան միաբանութեան շրջանակներում, իր արտահայտած գաղափարներով և լեզվական կուլտուրայով Ալիշանը հավատարիմ մընաց նրա գրական ավանդներին: Սակայն, միևնույն ժամանակ, նա առաջին հայ բանաստեղծներից էր, որի մոտ հանդես եկան ռոմանտիկական աշխարհընկալման առաջին նշանները. իր «Նահապետի երգերով» նա հաղթահարեց կլասիցիզմի կապանքները՝ մի քայլ առաջ մղելով հայ պոեզիան:

Ալիշանի «Նուագը» խորագիրը կրող բանաստեղծությունների հինգհատորյակը (1857—1858) գրեթե ամբողջովին (բացառութեամբ «Հայրունի» հատորում ղետեղված «Նրգը Նահապետի» շարքի) պատկանում է կլասիցիզմի գորական ուղղութեանը: Բանաստեղծական այս գրքերի ժանրային պատկերն իր հիմնական կողմերով հիշեցնում է «Տաղը Մխիթարեան վարդապետաց» ժողովածուն: Սակայն, ունենալով իսկական բանաստեղծի ձիրք, Ալիշանն այստեղ ևս դրսևորում է իր ինքնուրույնությունը: Նախ, նա իր բանաստեղծությունները խմբավորել է ըստ թեմայի՝ կազմելով յուրատեսակ շարքեր, որոնք ունեն թեմատիկ-գաղափարական և ժանրային որոշակի միասնականություն: Բացի այդ, Ալիշանի լեզուն մասամբ արդեն ձեռքագատված է խրթնաբանություններից, նա ավելի շատ է ձգտում հասկանալի լինել, քան այդ անում էին վենետիկյան մյուս բանաստեղծները: Եվ, կարգալով Ալիշանի այդ հատորները, նույնիսկ այն գործերը, որոնք ունեն կրոնական թեմատիկա, մանվածապատ բովանդակություն և լեզու, մենք գտնում ենք, որ գործ ունենք շատ ինքնատիպ մի բանաստեղծի հետ, որն իր մեջ պարփակում է ստեղծագործական մեծ տարերք:

«Նուագը» ժողովածուի հիմնական ոլորտը կրոնական բարոյախոսությունն է՝ միաձուլված խոր հայրենասիրութեան հետ. սրանով Ալիշանը մոտենում է մխիթարչյան մյուս բանաստեղծներին: Սակայն նրա մոտ քնարական տարրն ավելի գերիշխող է, նա ավելի հաճախ դիմում է բնութեան նկարագրութեանը՝ ստեղծելով հասոցված պատկերներ: Այնուամենայնիվ, իբրև մանական բանաստեղծ, նա երբեք չի մոռանում կրոնական քարոզը, որի միջոցով ցանկանում է բարոյապես բարձր և առաքինի մարդիկ դաստիարակել: Այս նպատակին է ամբողջովին ծառայում նրա առաջին՝ «Մանկունի» հատորը, որտեղ ղետեղված են կրոնական բովանդակութեամբ ոտանավորներ մանուկների և պատանիների համար, Աստածաշնչի տարբեր տողերի ընդարձակ բանաստեղծական մեկնություններ: Մրանց նպատակը ոչ միայն կրոնական գագամունք ներշնչելն է, այլ ավելի շատ բարոյական քարոզն ու խրատը: Բանաստեղծը ձգտում է հավատ և հույս սերմանել մատաղ սերնդի մեջ, սեր դեպի ծնողներն ու բարերարները («Վասն ծնողաց և բարերարաց», «Վասն եղբայրասիրութեան»), աշխարհիկ մեղքերից հեռու պահել նրանց, սովորեցնել հեզ և հնազանդ լինել («Առէք դուծ իմ ի ձեզ»):

Ձի հեղութեան է լուծս այս
Բառնայ զծանունս և զբարս.
Եւ բուն իմ փոքր է պատուէր
Սիրել զԱստուած եւ զրնկեր.
Առէք թղութս իմ ի ձեզ
Ու եղբուք ինձ նման հեզ⁷:

⁷ Ղևոնդ Ալիշան, Նուագը, հ. Ա, Վենետիկ, 1857, էջ 80: Հաջորդ մեջբերումների ղեպերում փակագծում կնշենք հատորն ու էջը:

Բանաստեղծությունների երկրորդ հատորն իր ժանրային պատկերով շատ բազմազան է: Այստեղ կան ուղերձներ և ներբողներ, զանազան տոներին և մերձավոր անձանց նվիրված փառաբանական ոտանավորներ, կրոնական բանաստեղծություններ, ինչպես նաև հարսանիքների առիթով գրված ներբողներ: «Խոհունի» շարքում Ալիշանը զետեղել է իր խոհուն-փիլիսոփայական բնույթի բանաստեղծությունները, որոնք ունեն նաև բարոյախոսական ուղղվածություն: Գտնելով, որ կյանքում ամեն ինչ ունայն է ու սուտ, նա մարդուն խորհորդ է տալիս ապավինել հույսին, առանց որի ոչինչ չի կատարվում աշխարհում («Յոյս»), Մեկ այլ բանաստեղծության մեջ («Կրօնք և ժամանակ») Ալիշանը միակ հավերժականը կյանքում համարում է կրոնը, որն անպարտելի է նույնիսկ ժամանակի առջև:

Երկնածրնունդ աստուածագգևաց կուսանակ
 Միայն կրօնք՝ կան աշխարհի ապաւէն
 Յաղթի նմանէ ամենայաղթն ամանակ.
 Ընդդէմ նորին՝ ամենայն ջանք ոչ բաւեն (Բ, 94):

«Բնունի» շարքն արդեն աչքի է ընկնում իր հովվերգական տրամադրություններով: Այստեղ կան բնության տարբեր երևույթներին նվիրված շատ գեղեցիկ բանաստեղծություններ («Զեփիւռն այգուն», «Արուեսակ», «Առաւօտ», «Միջօրէ», «Լուսին», «Գիշեր», «Ծաղկունք», «Անու» և այլն): Ալիշանը կարողացել է դրսևորել քնարերգու-բանաստեղծի իր իրական տաղանդը՝ քստեղծելով բնության ինքնատիպ պատկերներ: Ալիշանը չոր ու սառը դիտողականություն հանդես չի բերում, այլ արտահայտում է նաև իր հուզական վերաբերմունքն ու քնարական ապրումները: Ահա «Առ ձագն» բանաստեղծությունը, որտեղ խոսվում է մի թռչնակի մասին, որին իր խցում սիրել, զգվել է բանաստեղծը և հետո ազատ արձակել:

Գարձի՛ր ձագիկ սիրունակ
 Յազատութիւն քո դարձիր
 Երկինք են քո պարունակ,
 Զի՛նչ առ յինէն քո խընդիր.
 Քո մեղուցեալ ումեք շիք,
 Զրմեղանչեմ եւ ես քեզ.
 Խանձիմ բաղդիդ կրջանիկ,
 Տամ քեզ ըզքոյդ աստարեդ.

Ե՛րթ թըռիր յօդս անարգել
 Բարձեալ ըզջերմըս համբոյր,
 Եւ արձակեալ ձայն գելգել
 Մաղթեա՛ եւ ինձ ելս անդոյր (Բ, 256):

Այս հատորի մի շարք բանաստեղծություններ նվիրված են տարբեր տեսարժան վայրերի («Ի Վալլէն լճի Հելուեցիոյ», «Ի յիշատակ հեղեղատին Մուղոնայ», «Ի Հիւսիսային ծովու», «Առ Պլաւի գետ» և այլն) և շունեն այն պատկերավորությունն ու զգացմունքայնությունը, ինչ «Բնունի» շարքի մյուս բանաստեղծությունները: Այստեղ Ալիշանի ոճն ավելի հանդիսավոր է ու ուսցիոնալիստական:

Երրորդ՝ «Հայրունի» հատորի գրաբար բանաստեղծությունները հիմնականում կլասիցիզմի սկզբունքներով կերտված հայրենասիրական ներբողներ են, նրանց լեզուն բավական խրթին է, ոճը՝ հանդիսավոր: Այս կարգի գործերում հեղինակը հաճախ հանդես է գալիս հայրենասիրական, նաև ուսմական կոչերով («Երթ ու գնացք զօրացն Հայոց», «Յառանձար սեպուհ Ամատունի», «Քաջակորովն: Մուշեղ ի ճակատամարտն Զիբաւայ», «Կարմիրն Վարդան» և այլն):

Շատ ինքնատիպ են այս հատորի տապանագրերը, որոնք ունեն «Մա-
հարձանք Հայկազանց» ընդհանուր վերնագիրը: Սրանք նվիրված են ոչ թե
ժամանակակիցներին, այլ հայ ժողովրդի պատմության մեջ խոշոր դեր խա-
ղացած անհատներին: Ալիշանը տապանագրեր է նվիրել Թորգոմին, Հայկին,
Արային, Զարմայր Նահապետին, Վասակ, Մուշեղ և Վարդան Մամիկոնյան-
ներին և ուրիշներին:

Կրոնական բովանդակություն ունեցող իր բանաստեղծություններն Ալի-
շանն ամփոփել է «Տէրունի» հատորում, որը գեղարվեստական առումով մեծ
արժեք չի ներկայացնում: Ժանրային իմաստով այն նույնպես բավական մի-
օրինակ է. այստեղ կան սաղմոսատիպ բանաստեղծություններ (աղոթքներ),
փառաբանական օրհներգություններ՝ նվիրված աստծուն և Հիսուսին, ներբող-
ներ՝ ձոնված Մարիամ աստվածածնին, զանազան սրբերի և նահատակների:
«Օրհնեալ է Աստուած» ընդարձակ բանաստեղծությունը, որով եղրափակվում
է գիրքը, արտահայտում է ողջ հատորի հիմնական տրամադրությունը. քանի
որ Աստված է աշխարհում գոյություն ունեցող ամեն ինչի արարիչը, ապա
հավերժ պետք է օրհնել ու երկրպագել նրան.

Օրհնեալ է Աստուած
Յանուն Եփեռաց
Յանծայր գաւառաց
Անուշակ վայրաց,
Ի բըլրոց փառաց
Մըշտընչենակաց՝
Յըխորս սանդարաց
Վըհից խաւարաց
Ալուցն յատակաց
Ոչընչի դրացեաց,
Օրհնեալ է Աստուած (Դ, 271):

«Նուագք» ժողովածուի վերջին՝ «Տխրունի» հատորը գրեթե ամբողջովին
կազմված է եղբերգություններից. այստեղ Ալիշանը բանաստեղծական մեծ
վարպետությամբ պատկերում է իր հոգու լուռ տառապանքները («Վիշաք
լուռ»), որոնք հանգիստ չեն տալիս նրան: Նա երանի է տալիս իր մանկու-
թյան օրերին, երբ ինքն անհոգ էր ու երջանիկ, իսկ այժմ տառապում է նրա
սիրտը, և չկա մտերիմ մի մարդ, որ վշտակից լինի նրան.

Ընդէ՞ր տրտում ես անձն իմ
է՞ր գըլխակոր՝ սիրտ աղու.
Եւ չիցէ՞ ոք մըտերիմ
Տառապանաց քոց հասու (Ե, 12):

Սակայն այս հատորի ամենից արժեքավոր մասը «Բանք պանդխտի»
շարքն է, որտեղ Ալիշանը նկարագրում է պանդուխտ մարդու տառապանք-
ներն ու կարոտը՝ հայրենիքից հեռու: Շարքում իշխում է քնարական, տխուր
տրամադրությունը: Դտնվելով օտար երկրում, պանդուխտն անվերջ կարո-
տում է իր հայրենիքը, հիշում իր անցկացրած երջանիկ օրերը հայրենի հողի
վրա.

Անդ օդք ազատք շընչին ազատ,
Եւ օշարակ կենսանորոգ
Արբուցանեն քեզ անընդհատ
Քոյինատունկ ծաղկանց բոլորք.
.
.
.
Երկիր յոր կամ՝ չէ հայրենիք.
Չըկայ ծաղիկ աստ, չըկայ սէզ.
Չըկան ընկերք ինձ ցանկալիք
Ասել իջուրք մեք ի պարտւղ (Ե, 160—161):

Պանդուխտը կարոտով է հիշում իր հայրենի հովը, հայրենի պարտեզն ու բնությունը և նախանձով նայում ծիծեռնակին, որը թռչելու է նորից դեպի հարավ («Առ ծիծառն»):

Պանդխտության մոտիվն արդեն նորութունն էր մխիթարյան պոեզիայում. այն իր արմատներով ավելի կապված էր հայ միջնադարյան բանաստեղծության և ժողովրդական երգերի հետ: Այս հանգամանքը մեկ անգամ ևս հիմք է տալիս պնդելու, որ Արիշանը հայ կլասիցիստական պոեզիան հարրստացրեց որոշակի գեղարվեստական արժեքներով:

А. Э. ДЖРБАШЯН—Жанры лирики армянского классицизма.— Исследование трехтомного сборника «Таги вардапетов-мхитаристов», опубликованного в 1852—1854 гг. в Венеции, дает более или менее полное представление о жанрах армянской поэзии классицизма. Подобно общеевропейскому классицизму в лирике мхитаристов отдается предпочтение жанру оды. Ширское проявление в стихотворениях мхитаристов нашло также послание. Поэты школы мхитаристов писали и в жанре идилии, лучшие образцы которой принадлежат Юрмюзяну, в их творчестве особое место отведено элегии, эпитафии, сатире, сонету и др. жанрам поэзии классицизма. При всем многообразии жанров, мотивов и стилей армянские поэты этого направления часто преодолевали рамки рационализма, выражая тонкие лирические чувства и настроения.